ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«04» նոյեմբերի 2024թ. № 1067

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱԿԱՐՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ
ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածով, 54-րդ հոդվածի 1-ին մասով, 55-րդ հոդվածով, հիմք ընդունելով տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ 2024 թվականի նոյեմբերի 4-ի տեղեկանքները, հաշվի առնելով, որ Մարիամ Հովհաննեսի Մակարյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չի կատարել իրեն սեփականության իրավունքով պատկանող «NISSAN QUEST 3.5 L» մակնիշի փոխադրամիջոցի (հաշվառման համարանիշ՝ 36MV969) 2019-ից 2023 թվականների գույքահարկը վճարելու պարտավորությունը, որը կազմում է **չորս հարյուր տասնչորս հազար ինը հարյուր քսաներեք** ՀՀ դրամ, որից ապառք՝ **երեք հարյուր երեսուն հազար չորս հարյուր երեսունութ** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **ութսունչորս հազար չորս հարյուր ութսունհինգ** ՀՀ դրամ՝ ***որոշում եմ.***

1. Մարիամ Հովհաննեսի Մակարյանից հօգուտ Սպիտակ համայնքի գանձել **չորս հարյուր տասնչորս հազար ինը հարյուր քսաներեք** ՀՀ դրամ, որից ապառք՝ **երեք հարյուր երեսուն հազար չորս հարյուր երեսունութ** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **ութսունչորս հազար չորս հարյուր ութսունհինգ** ՀՀ դրամ:

2. Սույն որոշման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եռօրյա ժամկետում իրազեկել Մարիամ Հովհաննեսի Մակարյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

5. Սույն որոշման պահանջը չկատարելու դեպքում, այն ենթակա է կատարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով՝ անբողոքարկելի դառնալու հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 4
ք. Սպիտակ